# Վերամշակման ու օրգանական թափոնների վերամշակման ուղեցույց բիզնեսների համար

## Կալիֆորնիայի պարտադիր վերամշակման օրենքները վերաբերում են Ձեզ յս:

### Պարտադիր վերամշակում յ օրգանական թափոնների վերամշակում (MCR, MORe յ SB 1383)

- Բիզնեսները, ընդ որում հանրային կազմակերպությունները, պարտավոր են պիտակավորել ու ու վերամշակել կոնտեյներներն ու պարբերաբար ստուգել դրանք աղտոտումից զերծ պահելու նպատակով:*
- Բիզնեսները պարտավոր են իրենց աշխատողներին ծանոթացնել պատշաճ վերամշակման կանոններին:

### SB 1383. Սննդամթերքի վերականգնում

- Կարգավորումները պահանջում են, որ սննդամթերքի լիազորված նվիրատուները պայմանագրեր կամ գրավոր համաձայնագրեր ունենան սննդամթերքի վերականգնման կազմակերպությունների ու ծառայությունների հետ:
- Սննդամթերքի նվիրատուները սովորաբար մեծ սուպերմարքեթներն ու ռեստորաններն են, սննդամթերքի բաշխիչ/մեծածախ առևտրով զբաղվող կազմակերպությունները:*

**Add jurisdiction contact information here**

### AB 827. Հաճախորդներին ծանոթացնել Կալիֆորնիայի վերամշակման նպատակներին ու ներգրավել դրանց հետամուտ լինելու ջանքերում

- MCR-ին ու MORe-ին ենթակա բիզնեսները պետք է վերամշակման ու օրգանական թափոնների վերամշակման կոնտեյներներ տեղադրեն շենքերի առջև՝ հաճախորդների կողմից գնված ու տվյալ տարածքում սպառված ապրանքներից առաջացած թափոնները հավաքելու նպատակով: Այդ կոնտեյներները պետք է տեղադրվեն աղբի կոնտեյներների կողքին:

### AB 827-ի պահանջները

- AB 827-ը պահանջում է, որ տան առջև տեղադրված հավաքման կոնտեյներները լինեն տեսանելի, դյուրությամբ հասանելի և հստակորեն նշագրված:
- Այս օրենքը վերաբերում է բիզնեսներին, որոնք վաճառում են անհապաղ սպառման համար նախատեսված արտադրանք:
- Լիարժեք սպասարկման ռեստորանները պարտավոր չեն տեղադրել հաճախորդների համար նախատեսված պատշաճ պիտակավորմամբ կոնտեյներներ, բայց պարտավոր են պատշաճ պիտակավորմամբ կոնտեյներներ տեղադրել աշխատողների համար նախատեսված աղբի կոնտեյներների կողքին՝ հաճախորդներից մնացած հատուկ վերամշակելի հետ-սպառողական թափոններն ու օրգանական թափոններն առանձնացնելու համար:

*Այս պահանջների ու դրանց կապակցությամբ օժանդակության մասին հավելյալ տեղեկատվություն կարելի է գտնել այստեղ. https://www.calrecycle.ca.gov/Recycle/

Ձեր կարիքներին հարմարեցվելիք պայմանանշանների համար խնդրում ենք այցելել https://www.calrecycle.ca.gov/Recycle/ Commercial/Organics/PRToolkit/